«ՍԵՎԱՆԻ Խ.ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ»

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ ԿՆՈՋ ԿԵՐՊԱՐԸ ԵՎ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ

ԱՌԱՐԿԱ՝ ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՀԵՂԻՆԱԿ՝ **Կ.** ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ՝ ‹‹ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԼՃԱՇԵՆ ԳՅՈՒՂԻ Ա.ՏԵՐ-ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ››

ՊՈԱԿ

Բովանդակություն

1. Ռաֆֆու անդրադարձը կնոջ կերպարին
2. Կնոջ կերպարը և հոգեբանությունը Զոհրապի և Նար-Դոսի ստեղծագործություններում
3. Հայ կնոջ կերպարը և հոգեբանությունը Ս. Խանզադյանի «Թագուհին հայոց» վեպում

Ներածություն

Հայ հին բանահյուսության մեջ մեզ հայտնի առաջին վիպական հերոսուհին Տիգրանուհին է («Տիգրան և Աժդահակ»): Այս ավանդավեպում նորություն է հայ կնոջ կերպարը:

Հայ իրականության մեջ կնոջ կերպարին մեծ ուշադրություն հատկացնող մտածողների շարքում նշանակալից դերակատարություն ուներ Րաֆֆին: Հոգեբանական նրբին զննումներով է գավառի հայուհու կերպարը բացահայտում Րաֆֆին, թափանցում նրա ներքին ծալքերի մեջ, պատկերագրում հակասությունների ու ցավերի մի լուռ աշխարհ, ուր մաքուր, անձնվեր սերը գունաթափվում և խամրում է երազանքների ու համակերպումի լուռ բախումից, ուր ծաղկող հոգու պոեզիան հաճախ է աղարտվում շրջապատի անողոք ու սառը միջամտությունից: Ցույց տալով կնոջ ծանր վիճակը՝ Րաֆֆին դրա արմատները որոնում է նրա տգիտության ու անկրթության մեջ:

«Ուխտյալ միանձնուհի» պատմվածքում օրիորդ Սոնան դեռ յուր մոր արգանդումն էր, երբ նրա ծնողները ուխտեցին ՝ եթե աղջիկ լինի՝ նվիրել Սուրբ Աստվածածնին աղախին դառնալու: Պատմելով Սոնայի դժբախտ ճակատագրի մասին՝ Րաֆֆին ցավով արձանագրում է, որ հայ ընտանիքներում աղջիկը սեփական կամք, զգացմունք չունի, «նրա բոլոր գոյությունը պատկանում է ծնողներին»:

Աղջիկը գնահատվում է որպես ապրանք: Աղջիկը «կեղծ դրամ է » այսպես են դատում նաև բալզակյան հերոս Տայֆերը (միլիոնատեր Տայֆերը Վիկտորինային տնից դուրս է վռնդել օժիտ տալու տհաճ հոգսից ազատվելու նպատակով) («Հայր Գորիո»), Դիկենսի՝ Դոմբին (Դոմբին ատում է Ֆլորենսին, քանի որ աղջիկը « օգուտ չբերող» ապրանք է («Դոմբի և որդի»):

Խտրականությունը կնոջ հանդեպ շարունակվում է նաև ամուսնությունից հետո, և նա մեկընդմիշտ կորցնում է «ազատությունը»: Իսկ այն օրից, երբ նա նշանվեց մեկի հետ, նա իր բոլոր հարաբերությունները կտրում էր դրսի աշխարհի հետ, նա դառնում էր իր տղամարդու սեփականությունը, նրա աշխարհը լինում էր ամուսնու տան չորս պատերը… Նա ապրում էր իր ամուսնու համար, որպես նրա ծածկյալ ու վարագուրված սրբությունը, որի ներսը նայել ոչ ոք չէր կարող: Տգիտության ու այրերի քմայքների տակ ճնշված, ճակատի քրտինքը հաճախ իր անձկությունների մրուրին խառնելով՝ անհամարձակ ձգտումներով է խմորված դեռատի կնոջ բարոյական ու ֆիզիկական նկարագիրը՝ քողարկված պարկեշտությամբ ու հնազանդությամբ, ծրարված հույզերով

ու մորմոքներով: Միամիտ ու խոնարհ գեղջկուհին չէր կարող խորհել ինքնուրույնության, արժանապատվության, կյանքի հեքիաթը ըմբռնելու ու վայելելու մասին: Ամուսնուն նա տեսնում է միայն գիշերով՝ որի հետ պիտի խոսեր գաղտնի, երբ մի երրորդ անձ ներկա չէր: Հոր տանը նրա երեսը բաց էր, իսկ այստեղ նրա երեսը ծածկված էր թանձր կարմիր քողով: «Երեսը բացված կին է» գյուղացու լեզվում նույն էր, թե անբարոյական է: Հայ կինը պարտավոր էր յոթ տարի չխոսել: Երբ այդ շրջանն անցնում էր, հասակավոր կանայք հավաքվում էին և հանդիսավոր կերպով նրա «քողը փոխում», այսինքն՝ կարմիր քողի փոխարեն գցում էին սպիտակը, և այդ օրից նա երեսը կիսով չափ բաց անելու արտոնություն էր ստանում: Նա արդեն իրավունք ուներ ընտանիքի մի քանի անդամների հետ խոսել, բայց ոչ սկեսուրի ու սկեսրայրի հետ: Ամբողջ օրը նա անցկացնում է ոտքի վրա, գիշերն անկողին է մտնում, երբ ընտանիքի բոլոր անդամները քնած են լինում , իսկ վաղորդայնին արթնանում է բոլորից վաղ: Նա այն աստիճան համբերատար է, որ շատ անգամ բավական ծանր հիվանդություններ տանում է ոտքի վրա՝ ոչ ոքի իրավունք չունենալով հայտնելու իր տկարության մասին: Ռաֆֆին փաստում է նույն անգթությամբ, ինչպես իր վարող եզան կամ գոմեշի հետ: Գյուղացի կինը սիրել չգիտեր, ինչպես նրա ձեռքերն էին կոշտացել աշխատանքի մեջ, այնպես էլ սիրտն էր կորցրել զգայականությունը: Երբ ամուսնու մասին խոսք էր բացվում, կինը համարձակություն չուներ նրա անունն անգամ բարձրաձայն արտասանելու: Միշտ օգտագործում էր «նա» դերանունը:

Կինը հպատակվում է տղամարդուն անպայման հնազանդությամբ… Կնոջ դերը կրավորական էր, իսկ տղամարդունը՝ ներգործական: Տղամարդը միշտ իրեն բարձր էր դասում կնոջից, և այն համոզմունքն ուներ, թէ «կնոջ ծամը երկար է, բայց խելքը՝ կարճ»: Տղամարդը կատարյալ տեր էր, իսկ կինը՝ հպատակ: Ռաֆֆին ցավով նկատում է, որ հայ կնոջ աչքերը , որոնք բնությունից այնքան գեղեցիկ են, փչանում են փոշու ու ծխի մեջ: Ծանր աշխատանքի ու ընտանիքի ճնշման տակ կինը իսպառ կորցնում է իր ուրախությունը. Նա երբեք չի ծիծաղում, նա միշտ տխուր է: Եթե կինն ամուլ էր, ապա պատիվ չուներ ինչպես ընտանիքի, այնպես էլ հասարակության մեջ: Նրա վրա նայում էին որպես չբեր կովի: Ամուսնական անհավատարմությունը խիստ հազվագյուտ էր գյուղերում, տեղեկացնում է Ռաֆֆին, իսկ եթե լինում են օրինակներ, պատժվում են մահով. Խանդոտ տղամարդը գաղտնի կամ բացահայտ սպանում է նրան, և հասարակական կարծիքը արդարացնում է ամուսնու այդ եղեռնագործությունը: Իսկ եթե ամուսինը հանդուրժում է կնոջ անհավատարմությունը, նրա ընտանիքը «դուրս է նետվում» գյուղական հասարակությունից:

Գավառական քաղաքում կնոջ դերը այլ է: Ամուսմության առաջին ամիսներից վերանում էր ամուսնական սիրո ջերմությունը, սառնությունն աննկատելի օտարացնում էր ամուսիններին, սկսվում էր ընտանեկան դժոխքը: Ծնողներն էին տնօրինում նրա ամուսնական բախտը:

Ամուսնուց շուտ էր ձանձրանում, որովհետև նրա սիրտը չէր սովորել երկար սիրել մեկին, իսկ տղամարդն էլ կնոջ մեջ տեսնում էր ընդամենը երկու արժանիք՝ նրա մարմնական գեղեցկությունը կամ հարստությունը:

Ռաֆֆին «Սամվել» վեպի «Հառաջաբան» ում նշում է, որ մեր պատմության մեջ մոռացված է և մեր ժողովրդի մի նշանավոր տարրը-կինը: Մենք ծանոթ ենք մի քանի կանանց անունների հետ միայն, իսկ նրանց կյանքը իր բոլոր մանրամասներով մեզ անհայտ է: Ի՞նչ էր հայ կինը , որպես ամուսին, ի՞նչ էր նա, որպես մայր, ի՞նչ դեր էր խաղում , որպես ընտանիքի և հասարակության անդամ,- այդ մենք չգիտենք: Մենք չգիտենք նաև , թե ինչպես էր հայտնվում նա ժողովրդական տոների և հանդեսների մեջ, կամ ո՛ր աստիճան մասնակցում էր նրա ուրախություններին և տրտմություններին: Իսկ առանց կնոջ վեպ չէր կարող լինել. Կինն է նրա ոգին և կենդանությունը:

Կանանց կերպարը և հոգեբանությունը Ռաֆֆու «Սամվել» պատմավեպում և Եղիշեի աշխատության մեջ

Ռաֆֆին վարպետորեն օգտագործելով Բուզանդի և Եղիշեի ստեղծագործությունները, նրբությամբ կերտում է հայրենասեր հայ կանանց անզուգական կերպարները, որոնցից հատկապես ուշադրության են արժանի Վասպուրականի տիկնոջ՝ Համազասպուհու և Փառանձեմի հոյակապ դիմանկարները: Հայրենիքի սերը նրանց համար գերագույն արժեք է, սրբություն, ամեն ինչից վեհ:

Վասպուրականի տիկինը բացասական վերաբերմունք ունի իր դավաճան որդու՝ Մերուժան Արծրունու նկատմամբ, որին չի ընդունում հայրական օջախի սրբազան հարկի տակ: Նա ուրացողին նույնիսկ իր որդին չի համարում, այլ դիտում է որպես հայրենիքի թշնամի, որի դեմ հանում է իր զորաբանակը:

Հայ գեղարվեստական մշակույթի մեջ Համազասպուհին ևս ժողովրդական հերոսուհիների փառավոր համաստեղության մեջ ունի իր արժանի տեղը: Նա մեծատոհմիկ իշխան Գարեգին Ռշտունու կինն է: Վահանի և Մերուժանի հրամանով Համազասպուհուն անագորույն տանջանքների ենթարկելով ստիպում էին, որ նա ընդունի պարսկական կրոնը: Հայրենասեր տիկինը, սակայն, վճռականորեն մերժում է նման առաջարկը, քանի որ արհամարհանքով ու ատելությամբ էր լցված դեպի խավարամոլ պարսիկներն ու նրանց կրոնը:

Հայ ոսկեդարի պատմիչների համաստեղության լուսատուներից մեկը՝ Եղիշեն՝ իր «Վասն Վարդանաց և Հայոց պատերազմին» աշխատության մեջ նկարագրում է փափկասուն, իրականում պողպատե կամքի տեր հայրենասեր տիկնանց ապրելակերպն ու նրանց բնավորության ընդհանուր գծերը:

Հայոց գեղանի և փափկասուն տիկնանց ամուսինների, եղբայրների, որդիների ու բարեկամների մեծ մասը չնայած նահատակվել էր Վարդանանց ազատամարտում, իսկ շատերն էլ չարչարանքների և խոշտանգումների էին ենթարկվում, բայց տոկուն և անվեհեր հայ կանայք գրեթե չէին հիշում անցյալի փափկասուն կյանքը, իրենց կենցաղով նմանվում էին չարքաշ ապրող այն ռամկուհիներին, որոնք ի զորու էին դիմանալ ամենածանր փորձություններին: Նրանք, որ «մեծացել էին բազմոցների ու գահավորակների մեջ, այժմ շրջում էին բոբիկ ոտքերով կիսաքաղց վիճակում: Նրանց

մարմինները ցերեկները արևակեզ էին լինում, իսկ գիշերները՝ ցրտահարվում, հագուստ ու անկողին չլինելու և կիսամերկ գետնին պառկելու հետևանքով: Հայոց աննկուն հայրենասեր կանայք մոռացել էին իրենց կանացի փափկությունը և տղամարդկանց պես դարձել էին դիմացկուն և պնդակազմ արևելյան ելուզակների դեմ մղվող գաղափարական գոտեմարտում…»:

«V դարում,- գրում է Մ. Նալբանդյանը,- երբ հայոց ընտիր որդիքը զոհ գնացին պարսկական վիշապին, նոցա մայրերը, կանայք, քույրերը և դստերքը պակաս չերևեցան այն քաջերից, որ ազգի պահպանության համար քաջությամբ ընկան պատերազմի դաշտում… Փոշոտվեցան ու ծխոտվեցան սենյակները և առագաստները նորահարսերի, և սարդի ոստայն պատեց նոցա նախկին շքեղության վրա: Շատ ձմեռներ անցան, շատ գարուններ եկան, նոցա հետ միասին և գարնան ծիծեռնակներ, բայց նոցա տղամարդիկը ետ չդարձան. Նոքա յուրյանց այրիությունը նախատինք չհամարեցին, ինքյանց, այլ մանավանդ պարծանք, առաքինի ժուժկալությամբ հարսնանալով երկնավոր անմահ փեսային: Այսպես էին մեր հին մայրերը և քույրերը, այսպես էին մեր կանայքը, բայց ինչ մնաց այն օրից…»:

Հայ կնոջ էությունը, հոգեկան աշխարհը ներկայացնում է անպարտելի և առաքինի մայրություն, քաջակորով հայրենասիրություն: Այստեղ միանգամայն դիպուկ է հնչում Գ. Նժդեհի իմաստալից ասույթը. «Հայուհին, որ կարող է փոխարինել խաչափայտի առջև իր աստվածանման որդու վերքերը սգացող Տիրամորը- հայ կինը ավելի հերոսուհի, քան թախծության մայր պիտի լինի»:

Հայ կնոջ հայրենասիրական ոգին իր ցայտուն դրսևորումն ստացավ հատկապես Արցախյան գոյապայքարում: Պատերազմ, որն անջնջելի ու խորը հետք թողեց հայ կանանց հոգում, որովհետև նրանք կարծես ձեռք բերեցին հոգեբարոյական ուրույն կենսադիրք:

Հատկանշական է, որ 1988-1989թթ. Հանրահավաքների ժամանակ կամավորական ջոկատներին զինվորագրվելու և մարտի դաշտ մեկնելու կոչերին հայրենասիրական բուռն ցանկությամբ աչքի էին ընկնում հատկապես այն մայր-կանայք, որոնք մահվան էին գնում՝ տանը թողնելով երկու, երեք և ավելի երեխաներ: Միանգամայն գիտակցված հոգեբանական գիծ էր դարձել այն սառնասիրտ դիրքորոշումը, որ նախընտրելի է ճակատում լինել իրենց այրերի կողքին, նրանց հետ նայել մահվան աչքերին, դուրս բերել վիրավորներին մահվան օղակից, սփոփել, ոգեշնչել և դարմանել, քան թիկունքում մնալ մշտական ապրումների ու տագնապալի սպասումների մեջ: Ահա թե ինչ է գրում իր վերջին նամակում Աղավնի Տեր-Ստեփանյանը.

…Անկարող եմ ես չկռվել,

Երբ տեսնում եմ կռվողներին,

Անկարող եմ հանգիստ նստել,

Նայել լացող մեր մայրերին…

Դրա համար պետք է կռվեմ՝

Թեկուզ մարտում ինքս էլ ընկնեմ…

Այսպես, երբ Անուշ Ավագյանի մայրն աղերսագին խնդրում է դստերը, որ իր պառավ տատի հույսին չթողնի երկու անչափահաս զավակներին և ճակատ չգնա, նա պատասխանում է.«Մայրի՛կ ջան, ամեն ընտանիքից մեկը պետք է գնա, մեր տան տղամարդն էլ ես եմ»:

Տեղին են հնչում Գ. Նժդեհի իմաստուն այն խոսքերը, որ մայրերի ափի մեջ պիտի փնտրել ազգի ճակատագիրը:

Հայ կանայք իրենց հերոսական գործելակերպով մեկ անգամ կրկին ապացուցեցին, որ իրենց եսաշխարհում միշտ վառ են պահում Եղիշեի «Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին» մատյանի հայրենաշունչ ոգու սրբազան իմաստը, որի նշանաբանն այն է, որ յուրաքանչյուր անձ՝ թե՛ այր, թե՛ կին, միշտ պետք է պատրաստ լինի իր կյանքը կամավոր դնել զոհասեղանին հայրենիքի ազատության և ժողովրդի փրկության համար, անտեսելով մահը, դառնալով ժողովրդական հերոս՝ անմահացնելով իր Ես-ը:

Կնոջ կերպարը և հոգեբանությունը Զոհրապի նովելներում

Կնոջ կերպարը Զոհրապի նովելներում թարմություն էր՝ հոգեբանական խոր վերլուծություններով, սիրո ապրումի հրդեհով, խաբվածության լուռ ցավով:

Զոհրապի նովելների կերպարների զգալի մասը կանայք են՝ ամեն դասից ու խավից: Դրանցով նա մեծ նորություն է բերել մեր գրականության մեջ, հարստացրել է մեր գրականության կին կերպարների պատկերասրահը: Կանանց կերպարների միջոցով հեղինակը լուսաբանում է ժամանակի կյանքի ճահճացումը, բարքերի անկումը, աշխատավոր կնոջ դառը վիճակը, լուսաբանում այն ծանր դրությունը, որի մեջ ամեն մեկը յուրովի դժբախտ էր. Աշխատավոր կինը տառապում էր աղքատության ճիրաններում, ոտնահարվում էր նրա մարդկային տարրական իրավունքները, իսկ վերնախավի կինը զուրկ ինքնուրույնությունից, բռնադատված սահմանափակ դերի համար, մեծ մասամբ դժբախտ՝ սառը հաշվի վրա հիմնված անհամապատասխան ամուսնության, զգում էր անբավարարվածություն դրա մեջ, որից ամեն մեկը ջանում էր յուրատեսակ ելք գտնել՝ մեկն իր գեղեցկությունը չկորցրած մեռնելու մեջ, մյուսը կառչում էր հավատքին, մի ուրիշը ձյան պես փռվում «անցորդի» գարշապարի տակ, ոմանք լռեցնում էին իրենց սրտի ձայնը և հոգեպես տառապում, շատերը կերակրվում էին բամբասանքով և այլն:

Եթե Շիրվանզադեն կնոջ ֆենոմենը քննում է սոցիալ-հոգեբանորեն, ապա Զոհրապը նախընտրում է հոգեբանական վերլուծությունը:

Կինը Զոհրապի համար սովորական էակ չէ, այլ գեղեցկության խորհրդանշան, գեղեցիկը տեսնելու և զգալու միջոց, բանաստեղծության աղբյուր: Ահա թե ինչու նա կնոջ ամենաթանկագին հատկությունը համարում է նրա մարմնական և հոգեկան գեղեցկությունը և այնքան վախենում է այդ գեղեցկության խաթարման համար: Իր այս միտքը Զոհրապն արտահայտում է շատ բովանդակալից թևավոր խոսքերով. «կինը ծիծաղ մըն է, պետք չէ, որ լացի փոխվի»: Նա կնոջ կերպարների մեջ որոնում է հոգու գեղեցկությունը: Կինը կյանքի ժպիտն է: Զոհրապը հետևում է կյանքի անողոք ընթացքին, որը ուրույն կնիք է դնում կնոջ հոգեբանության վրա: Հույսի ու սպասման մեջ էլ կինը դժբախտ է. Նրա համար չկա երջանկություն նույնիսկ երազների մեջ:

«Այրին» նովելի հերոսուհին՝ Զարդարը, օժտված է կամքով, հոգու արիությամբ, ցավին դիմանալու կարողությամբ:

Աշակերտներին հարցնում եմ՝ ինչու նորապսակների միջև ջերմություն չի եղել: Լսում եմ տարբեր պատասխաններ՝ նորապսակների միջև սեր, մտերմություն չի եղել, որովհետև նրանց միությունը շատ կարճ է եղել, մտերմություն չէր կարող լինել նաև այն պատճառով, քանի որ ապրում էին «միևնույն հարկի տակ բնակվող բազմաթիվ ազգականներու աններող նայվածքին տակ»,դրա համար էլ Մարտիրոսը շուտ էր մոռացել կնոջը:

Աղջիկները բորբոքվում են՝ ի՞նչ է Զարդարը սիրելու և սիրվելու իրավունք չունե՞ր, նա գուրգուրանքի կարիք չունե՞ր, ո՞րն է նրա մեղքը, որ առանց ամուսնու պիտի լուռ և հնազանդ ծառայել բազմանդամ ընտանիքին՝ չունենալով անգամ գանգատվելու համարձակություն: Զարդարը հեզ ու հնազանդ բանում էր, հոգում ընտանիքի կարիքները, լուռ տանջվում: Զարդարը մոռացված ու լքված է, նա մենակ է իր վշտի հետ: Բարձրանում է հայ կնոջ կերպարը իբրև հավատարմության, պարկեշտության, ամոթխածության, հնազանդության մարմնացում: Զարդարը զուտ այդ ընտանիքի մեջ ծառայության համար էր և ամենաքիչը պատկանում էր իր ամուսնուն: Մարտիրոսի մեկնելուց հետո Զարդարի սկեսուրը անցավ երկարատև հանգստի, երիտասարդ կինը ագարակի կենդանիներին հատուկ հեզությամբ կատարում էր իր ծառայությունը:

Աշակերտները ցավում են Զարդարի համար, ափսոսում նրան, ինչ-որ տեղ մեղադրում, ինչու՞ է լուռ սգում, համակերպվում իր վիճակին, թող ամուսնանար, չէ՞ որ երեխա էլ չուներ, ի՞նչն էր նրան կապում այդ ընտանիքին, սիրում էր ամուսնուն, ում հետ հազիվ մեկ-երկու ամիս էր ապրել, թ՞ե եկեղեցում տված երդումն էր պահում նրան այդ տանը: Բայց Զարդարի խնդիրն այլ էր. Նա արամբի կին էր, իսկ «կին արամբի ի կենդանութիւն այր իւր կապեալ է օրինոք»: Զարդարն ամուսնանալ չէր կարող, ամուսինը կենդանի էր: Կենդանի էր, ճիշտ է, բայց չէ՞ որ Զարդարի կարգավիճակը հավասարազոր էր այրիանալու. Նա այրի էր՝ բառի երկրորդ իմաստով՝ անտերունչ, անօգնական ու լքված: Զարդարն իրեն բաժին հասած ճակատագրով եզակի չէր. Նրա շուրջը կային արդեն ծերացած կանայք, ովքեր նորահարսի պես «լռիկ ու խոնարհ» մաշել էին իրենց կյանքը՝ ամուսիններին սպասելով: Ցավոք, նրանք վերադարձել էին միայն այն ժամանակ, երբ ծերացել էին ու խնամքի կարիք ունեին: Ես ավելի չեմ բացվում 13-ամյա դեռահասների առջև, թե միայնակ կնոջ հետ ինչեր ասես, որ չեն կարող պատահել. գյուղաշխարհը կպիտակավորի նրան, տղամարդիկ այլ աչքով կնայեն, կանայք կչարախոսեն: Բայց սկեսուրն ու սկեսրայրը այդպես էլ չեն ընդունում, մեղավորը Զարդարն է, որ իրենց որդին չի վերադառնում: Նրանք անգամ սպառնում են իրենց դժբախտ հարսին դուրս անել տնից: Կյանքը թռչում է, տարիները գլորվում են, իսկ Զարդարը դեռ սպասում է… Խեղճ Զարդար:

Անտրտունջ ու լուռ հնազանդությամբ ենթարկվուղ Զարդարին հակադրվում է «Երջանիկ մահ»-ի անանուն հերոսուհին: Զարդարի մեջ խտացել է սպասման ողջ ահավորությունը: Կարեկցելով Զարդարին՝ հեղինակը դատապարտում է անսեր ամուսնությունը:

Հոգեկան ի՜նչ խոր տառապանք է ապրում Տիգրանուհին («Փոստալ»): Անարգված, լքված կնոջ դառը վիճակի գիտակցության մեջ, շշմած անակնկալ հարվածից, կապոցը թևի տակ, լուռ, սմքած, փոքրացած իր վշտերի ծանրության տակ, գնում է նա՝ շրջապատին անուշադիր և անտարբեր:

Հեղինակը իր նկարագրությունների մեջ ամեն ինչ չի ասում, նա վրձնի արագ շարժումներով նետում է կտավի վրա մի քանի խոսուն ուրվագծեր, որով լարում է ընթերցողի երևակայությունը և ստիպում իր հետ ստեղծագործել, և ահա ընթերցողը կարծես շոշափում է այդ վիշտը, կարծես տեսնում է Տիգրանուհու աչքերի մեջ քարացած արցունքը, որը հետո պիտի հալվի և առատորեն թափվի: Միակ լուսավոր կետը, թանկագին շղթան, որ կապում է նրան կյանքի հետ, մնում է իր զավակը՝ խորտակված կյանքի պտուղը, իսկ նրա մահից հետո՝ փոքրիկ շիրիմը: Իր հոգուն հատուկ խանդաղատանքով նկարագրել է Տիգրանուհու մայրական զգացումի բովանդակ հարստությունն ու գեղեցկությունը: Տիգրանուհին մենակ է կատարում իր զավակի թաղումը, հագցնում, զարդարում, չնայած իր սուղ միջոցներին՝ պահանջում է շքեղ սպասավորում, դագաղ է պատրաստել տալիս, որ «չմրսի» իր փոքրիկը, և ինքը մենակ հետևում է դագաղին: Դրանից հետո նրա հոգսը և ուրախությունը դառնում է երեխայի գերեզմանը: Իր բոլոր վաստակածը նրա վրա է ծախսում, ցանկապատում է: Մեռելոցի օրերը դառնում են Տիգրանուհու համար «ցնծության օրեր», նա գնում է գերեզմանատուն, չոքում փոքրիկ շիրիմի մոտ և երանությամբ խոսում իր զավակի հետ՝ «անոր մանուկի բարբառովը»:

Նկարագրելով Սուրբիկին և Տիգրանուհուն՝ հեղինակը մղում է ընթերցողին համեմատելու դրանց, և համոզվելու, որ աշխատավոր ժողովրդի դուստրը մարդկային շատ ավելի բարձր արժեքներ ունի, քան բարեպաշտի, բարեգործի և բարոյականության եռաշերտ դիմակի տակ թաքնված Սուրբիկը: Սուրբիկը կեղծիքի, անբարոյականության, գիշատչի հատկությունների մարմնացումն է, իսկ Տիգրանուհին՝ մանկական միամտության, բարոյական մաքրության, մայրական բյուրեղյա ջինջ ու ջերմ զգացումների:

Մի ամբողջ տիեզերք է Զոհրապի պատկերած կանացիական աշխարհը:

Բոլորովին այլ է Վասիլիկը («Զաբուղոն»), նա ցուցամոլ է, նյութապաշտ: Գիշերային աստղերի տակ տված սիրո երդումը դառնում է դավաճանություն, ուրեմն այնտեղ արտաքսված է սերը: Զոհրապը բանաստեղծական նրբին վրձնահարվածներով ներկայացնում է կանանց հոգում ծվարած անթարգմանելի զգացումները: Հոգեբանի իր խառնվածքով նա թափանցում է նրանց հոգու ծալքերը, սիրո դրամայի ամենամութ անկյունները: Նրա պատկերած կանայք գրավիչ են, սեր ու հրապույր են արձակում, բայց բախտահալած են ու ընկած, մարդկային եսասիրության և անիրավության զոհեր են:

Կանանց կերպարը և հոգեբանությունը Նար-Դոսի երկերում

Նար-դոսի պատմվածքները վիպական խտացումներ են, իրականությունից պոկված բաբախուն հատվածներ:

Հատկապես քայքայվող արհեստավորական խավերի շրջանում օրվա չարատանջ հարցերից է կանանց վիճակը՝ ուրիշի դռներին գիշեր-ցերեկ աշխատող, լվացքի, կարի վրա չորացած, տանջահար ու ծեծված կնոջ կործանման ողբերգությունը: Անլուծելի խնդիրները տանջում են հայուն, Անանին, Շուշանին: Ինչու՞ է կյանքն այդքան դաժան, ի՞նչն է անմարդկային դարձնում ամուսնուն: Բացվում են կնոջ հոգու վիրավոր խորքերը: Զուսպ, խորունկ, առանց սենտիմենտալ զեղումների մեր առաջ կանգնում է կինը՝ տառապանքի արցունքն աչքերին: Ահա Անանն իր ոսկրացած ուսերով, սառած, քարացած հայացքով, վտիտ մարմինը ամբողջապես ծածկված սկեսրոջ՝ գիժ Հոռոմսիմի եղունգների արյունով լցված ստորակետներով: Կարիքի թագավորությունը պատժել է նրան երկու կտոր շաքարի համար, պատիժ, որի պակասը լրացնում է ամուսինը: «Ջանիս վրա էլ տեղ չմնաց, որ արինլվիկ չարեց,-գանգատվում է նա, - էլ գլխիս վրա մազ չմնաց, որ չպոկեց, էլ գլխումս ղուղ չմնաց, էնքան թակեց… մինչև ե՞րբ…Մի անլեզու հայվանի պես ընկած եմ ինձ համար.

Տալիս են՝ ուտում եմ, չեն տալիս՝ ձեն չեմ հանում… »:

Մահվան սահմանը մոտենում է կյանքին, կյանքի թելը բարակում, մարդկանց մահը դառնում է աննկարագրելի, քանի որ նրանք ապրում են դանդաղորեն մեռնելով: Բռունցքի հարվածից «Անանը մինչև անգամ չճչաց, այլ միայն հանկարծ բերանը բաց արեց, ներս ծծեց օդի մի տարօրինակ հևքով, այնպես, ինչպես ջրից հանած ձուկը, հետո օրորվեց և կամաց, փալասի պես, վար ընկավ գետին»:

Ճերմակ աղավնու մաքրությամբ ու անմեղությամբ է փայլել Սառան («Սպանված աղավնին») հույսով ու հավատով նայելով մարդկանց ու ապագային: Սակայն կյանքը այրել է նրա հոգու թռիչքը: Այլ ձևով են կործանվում սառաները, որոնք իրենց ճշմարտությամբ ու անկախության ձգտումով բարոյապես բարձր են կանգնել շրջապատից: Դրանք սովորական կանայք չեն, նրանց վիճակում շատերը հաշտվում են

իրականության հետ, սակայն Սառաները ձեռնոց են նետում մարդկային կեղծ արդարությանը: Սառան ապրում է երազանքի դաժան իրականության դրաման:Լուսավոր երազների տեղ թույնով է լցվում մարդկանց հոգին, անմեղությունը և սերը փոխվում է վրեժի, բարոյալքվում և կործանվում են սերունդները:

Հայ կնոջ կերպարը և հոգեբանությունը Ս. Խանզադյանի «Թագուհին հայոց» վեպում

Վեպի գլխավոր կերպարը՝ հայոց թագուհին՝ Մարի-Լույսն է: Այս կերպարի մեջ տեսնում ենք հայ կնոջ, իսկական հայուհու անմնացորդ պատկերը, որին այնքան գեղեցիկ է նկարագրել Ս. Խանզադյանը:

«Մարի-Լույսը բերկրում էր, որ ինքը չքնաղ է՝ գարնան պատկեր: Նրանից լույս է ճառագում, օ, աստվածներ, ինչպես է նման լույս ծնվում: Երբ դու՝ Մարի-Լույս, շարժում ես քո թարթիչները, բիբերիդ սև խառնարաններից սև կրակներ են ժայթքում, վարդագույն մետաքսի փայլը մայր մտնող արևի հմայք է տալիս՝կլորիկ երես, խոշոր թուխ աչքեր, հոնքերի բարակ կամարներ»: Թագուհին օժտված է դշխոյական հպարտությամբ: Թագուհին անմնացորդ հայրենասեր էր: Մի կողմ դնելով իր կանացի հեզությունը՝ դառնում է հայրենիքի քաջ մարտիկ: Իր աստվածային գեղեցկությամբ, կանացի խորամանկությամբ հայ գրականության մեջ կանացի կերպարի՝ Խորենացու բնորոշմամբ, խորագետ գեղեցկուհիների լայն երակի սնուցողն է:» Հովհաննես Թումանյանի կերտած Թմկա տիրուհին եթե իմանար և ուսաներ այս պատմությունը, ապա չէր դավաճանի իր մարտիկին, իր գեղեցկությունը գրավ չէր դնի՝ անձը փառավորելու և հայրենիքը կործանելու համար: Մարի-Լույսը այն կանանցից չէր, որ ունենալով իշխանություն, ձիրք, կործաներ ամուսնուն և տրվեր կանացի անիմանալի խաղերին: Նա իր բոլոր արժանիքները խոնարհում է ամուսնու և հայրենիքի առջև՝ դառնալով հմուտ և ազնիվ խորհրդատու:

«Խնկի մգլած ծուխը պետք չէ մեզ, ամուսի՛նս, այլ բերդ, ամրություն, ուժ:»

Նա սիրում է իր ամուսնուն, հավատարմորեն ծառայում լոկ իբրև թագուհի: Իր իրական սերը զնդանած կրծքում՝ լուռ, միայն իրեն իմանալի ցավով տանջվում էր: Նա զգայական մտքով հազար անգամ դավաճանել էր ամուսնուն, որովհետև Տաշի-Հուսիկին էր սիրում.«Օ՜, Տաշի-հուսիկ, դու, որ իմ կյանքի մոլորակն ես, հանապազ ալեկոծում ես իմ հոգին:» Բայց բանականությունը տասը հազար անգամ սաստել էր սրտի թելադրանքին և ստիպել ամեն վայրկյան մտածել ամուսնու մասին: «Գինի մատուցեցին թագուհուն:

Խմեց՝ ամուսնու անունը մտքում»: Մեր ճանաչած ոչ մի հերոսուհու հետ չի համեմատվում Մարի-Լույսը: Նա որքան բարձր էր ամեն ինչից, այնքան հլու-հնազանդ-հավատարիմ էր ամուսնուն: «Ո՛չ, ո՛չ, երկնքում միայն Արամազդ աստվածն է, երկրի վրա՝ ամուսինս»:

Մարի-Լույսին մի գուշակուհի դեռ մանկուց զգուշացրել էր.«Դու կունենաս առավել շնորհներ, քան Աստղիկ դիցուհին, սակայն վերջդ արյունոտ պիտի լինի, որովհետև դու աստվածների կործանման և շատ մահվան պատճառ կլինես»:

Նախապես իմանալով իր վախճանը՝ թագուհին անցնում է իր աստվածակործան ռազմավարությանը, մերժում է մարդկանց զոհաբերությունը: Յուրաքանչյուր դեռահասի մեջ նա տեսնում էր իր որդուն, և մայրական սիրտը մղկտում էր՝ պատկերացնելով նրան զոհասեղանին: Նա պատկերացնում էր բոլոր մայրերի ցավն ու մորմոքը և խստագույն կերպով պատժում էր այն քուրմին, ով կհամարձակվեր խախտել նրա հրամանը: Թագուհին նողկում էր կրոնական քարացած կարգերից: Նա մտածում էր. «Ինչու՞ մարդն էլ աստվածների նման ազատ չէ իր կամեցողության մեջ »:

Ամուսնու օգնությամբ նա վերջ է դնում այնպիսի սովորույթների, ըստ որի, նորահարսերը առաջին օրը պետք է պատկանեին գլխավոր քրմապետին: Թագուհու աստվածակործան քաղաքականությունը հարուցում է կնապաշտ քուրմերի թշնամանքը: Վերջիններս սկսում են տարածել, թե իբր թագուհու որդին արքայինը չէ:

Մարի-Լույսը, հանուն որդու ազատության, պաշտպանության, զավակին հանձնում է Նուարին, որը խլեց ոչ միայն իր ամուսնուն, այլև նրա թագը՝ գրավելով հայոց թագուհու գահը:

Եզրակացություն

Կինը երջանկության, սիրո, նվիրումի քուրմ է, եթե սիրում է և սիրված է:

Կինն է սերնդի շարունակողը, և նա է լույս աշխարհի բերում նրանց, ովքեր հետո պիտի պաշտպանեն երկիրը: Կինը հող է, որի վրա են աճում բոլոր բարիքները, առանց որի կյանք լինել պարզապես չի կարող:

Օգտագործված գրականություն

1. Ռաֆֆի, երկերի ժողովածու 10 հատորով (Եր. 1955-1965) հ.9, էջ 358
2. Հեկտոր Ռշտունի- «Կանանց կերպարը Նար-Դոսի երկերում»
3. Զոհրապ, նովելներ, Երևան 1978թ.